Մանվել Սարգսյան
ՌԱՀՀԿ տնօրեն

Ղարաբաղյան հակամարտությունը հասարակության ընկալմամբ

Հազիվ թե հնարավոր լինի ժխտել, որ Հայաստանի անկախության հռչակումից 20 տարի անց Լեռնային Ղարաբաղի խնդիրը կորցրել է իր վերահսկողությունը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի նկատմամբ: Ինչքան էլ քաղաքական գործիչները եւ ակտիվ հասարակայնությունը աշխատում են տեղայնացնել ղարաբաղյան խնդրի նշանակությունը՝ դուրս բերելով հայկական պետականության կազմավորման գործընթացը վերջինիս թելադրանքի ոլորտից, այդպիսի ջանքերի արդյունքը չի արդարացնում սպասումները: Ղարաբաղի թեման կպչուն շաղախի նման շարունակում է ցեմենտել ողջ երկրի կյանքն իր բոլոր դրսեւորումներով: Պատահական չէ, որ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում հիմնովին արմատացել են երկու իրարամերժ կարծրատիպեր. «Ղարաբաղը ներպետական տարաձայնությունների պատճառն է» եւ «Առանց Ղարաբաղի չկա անկախ Հայաստան»: Երկրի բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակը եւ քաղաքացիների ակնհայտ իրավազրկությունը հասարակության մեջ արմատավորել են «քանի դեռ չի լուծվել Ղարաբաղյան հարցը, Հայաստանում չի կարող լինել ոչ մի զարգացում» քաղաքական նշանաբանը: Բոլոր մակարդակներում՝ քաղաքականությունից մինչեւ կենցաղ, այս դրույթների շուրջ էլ տեղի են ունենում անվերջ քննարկումներ:

Այս գաղափարական ծուղակին ընդառաջ ժամանակը ցուցաբերում է իր անկարողությունը: Երբեմն նույնիսկ թվում է, որ «Լեռնային Ղարաբաղի» խնդիրը վերածել է ինչ-որ համաշխարհային մի երեւույթի՝ ամբողջովին կամ մասնակի իր շրջանակներից դուրս թողնելով Լեռնային Ղարաբաղը որպես երկիր՝ իրեն բնորոշ իրողություններով: Այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ հայ հասարակության հետաքրքրությունը բուն Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կտրուկ անկում է ապրել՝ ի համեմատություն ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջպետական հարթություններում Ղարաբաղի խնդրի: Բուն Լեռնային Ղարաբաղը ավելի ու ավելի է դուրս մնում «Ղարաբաղի խնդրից». նա ավելի է զրկվում «Ղարաբաղի խնդրին» առնչվող հարցերում սեփականն կարծիքն արտահայտելու իրավունքից: ԼՂՀ-ին այդ իրավունքից զրկելու ցանկությունը դառնում է համատարած. Ղարաբաղի ձայնը դարձել է համընդհանուր գրգռիչ գործոն:

Կյանքը, սակայն, թելադրում է իր պայմանները. որքան Ղարաբաղը դժվարացնում է հայ ժողովրդի կյանքը, այնքան մեծանում է նրա ազդեցությունը այդ կյանքի իմաստի վրա: «Ղարաբաղյան խնդիրը» ավելի ու ավելի ձեռք է բերում ներազգային, ինչպես նաեւ միջազգային ազդեցություն: Այստեղ էլ թաքնված են անզորության եւ ջղաձգության արմատները: Ենթագիտակցության մակարդակում ձեւավորվել է կարծիք, որ արցախցիները «ամեն ինչում մեղավոր են»: Մեղավորության պատճառները տարբեր կերպ են մեկնաբանվում: Այս հանգամանքը, սակայն, քիչ բան է փոխում իրական կյանքում: Թերեւս ԼՂՀ-ում ապրող մարդիկ արդեն համակերպվել են նկարագրված

իրավիճակի հետ եւ համարում են, որ իրենք «մեղավոր» են, ինչով եւ «բոլորին խանգարում են»՝ ձգտելով ավելի ու ավելի շատ լռել:

Հարց է ծագում՝ ո՞րն է հայ հասարակության նման գաղափարական անհեթեթության աղբյուրը: Չէ որ թվում էր՝ հայ ժողովրդի գաղափարական միասնության աննախադեպ թռիչքը եւ դրան հաջորդած՝ անցյալ դարի ինսնունական թվականներին Ադրբեջանի դեմ հաղթական պատերազմը պետք է հզոր էներգիա հաղորդեին հայ ժողովրդին, որը հարյուրամյակների ընթացքում ենթարկվել էր ճնշումների եւ կրել կորուստներ: Գործնականում ստացվեց բոլորովի այլ կերպ. ժողովուրդն իր ժամանակակից պատմության եւ իր իսկ կերտած ազգային իրողությունների հանդեպ համակվեց ժխտողականությամբ: Ընդ որում, ստեղծված հոգեբանական իրավիճակը չի ենթարկվում ռացիոնալ իմաստավորման. պարզապես չկա այսպիսի հետաքրքրություն: Սա կարող է տեղի ունենալ լոկ այն դեպքում, երբ ձեւավորված իրողությունները չեն համապատասխանում հասարակության առաջնային սպասումներին կամ էլ հասարակությանը ներկայացնում են անցանկալի պահանջներ: Սա տեղի է ունենում նաեւ այն դեպքում, երբ նոր իրողությունները հակասության մեջ են մտնում ավանդական համոզմունքների հետ՝ հարուցելով հոգեբանական անհարմարության եւ մշտատեւ տագնապի զգացողություն: Նման իրավիճակներ վերապրել են աշխարհի շատ ժողովուրդներ պատմության տարբեր ժամանակաշրջաններում:

Չի կարելի պնդել, որ այս իրավիճակները հավերժ են եւ չունեն սպառվելու հեռանկար: Իռացիոնալը չի կարող երկար գոյատեւել. նման իռացիոնալ իրավիճակի պատճառը միանգամայն պարզ երեւույթներ են: Հայացքը սոսկ պետք է ուղղել Հայաստանի նորագույն պատմության մի շարք որոշիչ պահերի, որոնք, մեր կարծիքով, հասարակական-քաղաքական գործընթացների բացասական փոխակերպումների հիմք հանդիսացան՝ նպաստելով երկրում ոչ այնքան ռացիոնալ գնահատականների սանդղակի ի հայտ գալուն: Սույն հոդվածում, առաջին հերթին, իմաստ ունի քննարկել քաղաքական գործընթացների բացասական ազդեցության բաղադրիչը հասարակական ընկալման բնույթի դիտանկյունից: Ինչպես երեւում է՝ այս տեսակետն է հզոր ապակողմնորոշիչ դեր խաղացել՝ նենգափոխելով հայ հասարակության արժեքները:

Այսօր քչերն են գիտակցում՝ որքան պարզմիտ ու անհեռատես էին հայկական վերնախավի գնահատականներն ու գործողությունները Հայաստանի անկախության առաջին, հատկապես հետպատերազմյան տարիներին: Այդ ժամանակահատվածում ընդունված որոշումներն էին, սակայն, որ հետագայում հանրությանը եւ անմիջապես քաղաքական վերնախավին կանգնեցրին անլուծելի խնդիրների առջեւ: Ավելին, այդ որոշումները ապակառուցողական երեւույթների մի շղթա ձեւավորեցին, որոնք էլ հետագա տարիներին կանխորոշեցին խիստ բացասական զարգացումների ընթացքը: Մասնավորապես այս ժամանակ սաղմնավորվեց գործող իշխանությունների կողմից հասարակության կամքի նկատմամբ քամահրական վերաբերմունքը եւ երկրի սահմաններից դուրս հովանավորներ փնտրելու գործելակերպը: Համապատասխանաբար՝ պետք էր ակնկալել, որ ինչ-որ պահի դյուրագրգռությունը կփոխարինի ոգեւորությանը:

Այս ամենի սկզբնաղբյուրը անվստահության երեւույթն է, որն ընկած է հոգեբանական պառակտման շղթայի հիմքում: Իշխանությունների եւ հասարակության միջեւ առաջին

պառակտումն արձանագրվեց Հայաստանի իշխանությունների եւ Լեռնային Ղարաբաղի առաջին ընտրված իշխանությունների միջեւ դիմակայության ժամանակաշրջանում: Անտեսելով ԼՂՀ անկախության 1991թ. դեկտեմբերի 21-ի հանրաքվեի արդյունքները՝ ձեւավորվող ԱՊՀ շրջանակներում, ճանաչելով Ադրբեջանի ինքնիշխանությունը եւ գոյություն ունեցող սահմանները, Հայաստանի ղեկավարությունը ԼՂՀ ընտրված իշխանություններին պաշտոնանկ անելու մոտեցում որդեգրեց: Այդ ժամանակ էլ սերմանվեց ոչ լեգիտիմ իշխանության գաղափարը, որը բումերանգի նման վերադարձավ Հայաստան: 1993թ. Հայաստանի իշխանությունների կողմից արհեստականորեն խրախուսվող ԼՂՀ քաղաքական ուժի առաջնորդները պաշտոնանկ արեցին տեղի օրինական իշխանությանը, իսկ արդեն 1998թ. իշխանությունից հեռացրին բուն Հայաստանի քաղաքական վերնախավին: Անհասկանալի է՝ ինչ իմաստ ուներ այդ ամենը, սակայն ԼՂՀ-ում եւ Հայաստանում ցանկացած գործողություն իրականացվում էր «Լեռնային Ղարաբաղի պաշտպանության» դրոշի ներքո: Արդյունքում Ղարաբաղը պաշտպանության օբյեկտից վերածվեց իրական քաղաքական թելադրանքի գործոնի:

Պետք է հասկանալի լինի՝ ԼՂՀ-ի եւ Հայաստանի հասարակությունը չէր կարող գիտակցել ընթացող քաղաքական փոխակերպումների իրական էությունը: Անվտանգության գործոնը սքողում էր քաղաքական կյանքի մյուս բոլոր բնագավառները: Մարդիկ քիչ նշանակություն էին տալիս տեղի ունեցող գործընթացներին: Նույնիսկ ԼՂՀ առաջին ընտրված առաջնորդ Արթուր Մկրտչյանի մահը չդարձավ լուրջ մտորումների առիթ: Պատերազմը եւ հետպատերազմյան տարիները թելադրում էին այլ առաջնահերթություններ, եւ հանրության ուշադրությունը սեւեռված էր ֆիզիկական գոյատեւման խնդրի վրա: Միայն տարիներ անց, երբ 1999թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի խորհրդարանում գնդակահարվեցին խորհրդարանի խոսնակն ու վարչապետը՝ Հայաստանի իրական ռազմական պարագլուխը, հասարակությունն ալեկոծվեց: Հասարակության գիտակցության մեջ Ղարաբաղի պաշտպանության «սուրբ գաղափարը» փոխարինվեց Ղարաբաղի «քաղաքական դիկտատի» մերժողականությամբ: Հայաստանի հասարակությունը՝ ի դեմս իրենց Ղարաբաղի պաշտպաններ հռչակած քաղաքական գործիչների, կանգնեց Ղարաբաղի իրական քաղաքական նկարագրին դեմ հանդիման: Ընթացող գործընթացներն ընկալվեցին որպես մեծ անարդարություն:

Ղարաբաղը հասարակական գիտակցության մեջ ստվերվեց «բռնապետ-ղարաբաղցիների» կերպարով: Հայաստանում իշխանությունից հեռացված քաղաքական վերնախավը հետագա տարիներին ճիշտ համարեց բոլոր կազմախեղումները պայմանավորել ոչ թե իր իսկ կողմից ստեղծված քաղաքական հրեշի գործունեությամբ, այլ Լեռնային Ղարաբաղի խնդրի առկայությամբ: Ըստ երեւույթին՝ այն պարունակում էր որոշակի քաղաքական իմաստ. սքողել պատերազմական շրջանի քաղաքական որոշումների բացասական արդյունքները: Փաստացի, սակայն, առավել քան տասը տարվա ընթացքում ընդդիմադիր ուժերի նման գործունեությունը Հայաստանում նոր իշխանության քաղաքական եւ տնտեսական ամենաթողության խորապատկերին հասարակական գիտակցության մեջ արմատավորեցին մերժողականությունը: Չկարգավորված ղարաբաղյան հակամարտությունը եւ Հայաստանում «ղարաբաղցիների իշխանությունը» սկսեցին ընկալվել իբրեւ խոչընդոտ Հայաստանի զարգացման ճանապարհին:

Ռազմական հաղթանակի, ինչպես նաեւ ԼՂՀ ժողովրդի իրավունքների համար հետագա պայքարի արժեքը սքողվեց: Ղարաբաղը փոխարկվեց Հայաստանում ցանկացած ազատության «խեղդողի» կերպարով: Թե իշխանությունը, թե ընդդիմությունն առավելապես խտացնում էին այդ կերպարը: Պատերազմական շրջանի գաղտնիքները խնամքով թաքցվում էին հասարակությունից: Այս տարիների ընթացքում Հայաստանում եւ ԼՂՀ-ում աճեց քաղաքացիների մի նոր սերունդ, որը մեծացավ ամբողջովին գաղափարական ապակողմնորոշվածության մթնոլորտում: Երկրում հաստատված օլիգարխիկ վարչակարգը, զրկելով հասարակությանն իր սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորություններից, վերջին դրոշմը թողեց Հայաստանի՝ վերը նկարագրված ներքին առաջնահերթությունների վրա:

Ժամանակը, սակայն, անում է իր գործը: Ներկայումս Հայաստանում դիտարկվող իրավագիտակցության պոռթկումը գալիս է փշրելու ինչսունականներ քաղաքական առասպելաբանությունը: Մարդիկ ավելի շատ իրավական դիտանկյունից են սկսում գնահատել ազգային իրողությունները: Ուղղորդված մերժողականության միջոցով հասարակության կողմնորոշումը դառնում է ավելի ու ավելի խրթին խնդիր: Երիտասարդ սերունդը իրավունքի եւ պատասխանատվության հիմքի վրա ձեւավորում է հայոց պետականության իր տեսլականը: Անցած քսան տարիների ապակողմնորոշիչ քաղաքականության առանձնահատկություններն ինտենսիվորեն կորցնում են իրենց ներուժը: Հետեւաբար, առաջանում է վստահություն առ այն, Լեռնային Ղարաբաղի խնդիրն այդ թվում ենթարկվում է որակական վերարժեւորման՝ վերածնելով հետաքրքրությունն իրական երկրի եւ իրական մարդկանց նկատմամբ: